

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՅԻԷ ԲՂՔԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԵ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեռագիրներն ետ չեն դարձուիր,

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻԻԵՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՆԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՔՈՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

Գանձի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից	սարեկան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏԱՆՈՒՄՆԵ ԼՍԱՐ

Տարեկան	»	Ֆրանկ	18
վեցամսեայ	»	»	10

ԹԱՌԻՍՅՈՒՆ ԵՒ ԿՈՎԱՍՍԻ ԼՍԱՐ

Տարեկան	»	րուբլի	7
վեցամսեայ	»	»	4

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐԵԸ ԿԱՆԻԿ Է

ԵՒ ԲՂՔԱՍԱՐԻ ԾԱՒԻՐ

Թերթին վարչութեան վրայ է

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ ՍԿՍԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔԻ ՈՒ ԲԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՈՒՅՈՒՅԻ ԾԻՍԱՐ ՍՄԲԱՏ ՓԱՓԱԶԵՆՆԵՐ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐԻՆ ԱՆՎԱԽԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՍ ԿԸ ՓՈՒԹԱՅ ՅԱՅՏԱՐԱՐԵԼ ԹՅ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԲԱՐԳՐԱՊԵՏ ՏԻՍԱՐ ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ ԱՅՍ ՕՐՈՒՄՆԷ ՍԿՍԵԱՆ ԴԱԴԱՐԵՍԱԼ Է «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԲԱՐԳՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ:

22 ՍԵՊՏ. 900

«Նոր Օր»-ի վարչութիւնը կը խնդրէ. Արտասահմանի ու կողմասի արգոյ բաժանորդներէն որ հաճին պահանջել կրկնողով մը «Նոր Օր»-ի պակաս ստացուած թիւերը, որոնք պիտի զրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր» ստացող բոլոր կողմասի հայ թերթերու ու Հանդէսներու Պատ. խրմբադիրներէն որ իրենց հրատարակութիւնները փոխանակեն «Նոր Օր»-ի հետ:

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼՈՒՍ

Կարապետ Գալուստ Վասպուրական աշխարհի վանքազարէն էր. իր ծրնունըր տապանաքարին վերտառութեան նայելով 1802ին պատահած է, բայց իր ժամանակցաց ու ցարդ տարող իր ազգականաց վկայութեան համեմատ՝ աշխարհ եկած է հաւանորէն 1790ին. իր ընտանիքին անունն էր Հանմեան կամ Հանմ օղլու. հայրը քահանայ էր և կը կոչուէր Տէր Գալուստ. իսկ մօրն անունն էր Մարիամ:

Մանուկն կարապետ ժիր և անձնեայ, օժտուած էր սրտի և մտքի ազնիւ յատկութիւններով և կը յաախէր տեղւոյն ազգային վարժարաններն, ուր կ'ուսանի Հայերէն ընթերցանութիւն ու գիր, կը վարժուի

ասհուն կերպով խօսելու մայրենի ու պետական լեզուներն:

Կարապետ հազիւ վարժարանէն հրաժարած ու գործի ձեռնարկած՝ ծնողքին կամաց համեմատ կ'ամուսնանայ ազնիւ գերդաստանէ ազնկան մը, Օր. Պէկզատէի հետ:

Կարապետ կաթողին կը սիրէր իր ծնողքն, նոր հարսն ու հայրենիքն. բայց շատ չ'անցած, նիւթական պատճառներով, կ'ատկուի բաժնուի իր սիրելիներէն և իր գործի մարդու ընազդէն ու ձիւղբերէն թելադրեալ կուգայ, կը հակառակուի ի Գահիրէ, ուր կանխած էր զինք իրեն կրէց եղբայրն խաչատուր և որ այն ատեն ինչպէս հիմայ, իր ծոցին մէջ ունէր զանազան ասպարէզներու մէջ փայլող բազմաթիւ հոյակապ հայրենակիցներ, որոց մէջ նշանաւորներէն էին որբերու կառավարական սնտուկի Տնօրէն Ալիքսան աղա Եղիազարեան և եղբայրն Յակոբ աղա, բնիկ Ակնեցի Ալիքսան աղա կը սիրէր իր հովանին ու պաշտպանութիւնն տաւ ըստ իր հայրենի երկրէն նորեկ ազգակիցներու վրայ. մանաւանդ երբ տեսնէր անոնք ճարպիկ ու աշխուրջ, ինչպէս էր Կարապետ Հանմեան, որ յեղիպտոս գալէն ետքը՝ իր հօր անունով կոչուեցաւ Գալուստեան, համեմատ երկրին մէջ տիրող սովորութեան մը, որ կը յարգուէր նորեկներու շատերու կողմէն. շատ չ'անցած կարապետ Գալուստ վարժուելով խօսակցութեան արարեքէն լեզուի, որու գրականը յետոյ մշակեց, մտաւ ի ծառայութիւն Եղիազարեանց, որոնք վերոյիշեալ պաշտօնէն զատ կառավարութեան հետ ուրիշ կարևոր գործեր ալ կ'ընէին. կարապետ չնորհիւ իր խնայասիրութեան և գործունէութեան, քիչ ժամանակի մէջ զգալապէս բարւոյնց իր նիւթական վիճակն և յեղիպտոս բերել տուաւ իր հայրն և ամուսինն. այս վերջինն վաղամեռիկ եղաւ, չը կրնալով համա, ձայնիլ եղիպտոսական ոստանին՝ իրեն համար նոր և անսովոր պայմաններուն և կրելով իր սրտին մէջ հայրենիքի սիրոյ տոչորող հուրն, ինչպէս կը հաստատէ սրտառուչ և յոյժ ներբողական արձանագրութիւնն որ քանդակուած է իր շիրմին վրայ 1833

ապրիլ 1 թուականով. Պէկզատէ յառաջ վախճանած էր տագրը. յիշեալ խաչատուր. Տէր Գալուստի մահն ևս պատահած է ի Գահիրէ և մարմինն՝ միւսներուն պէս՝ ամփոփուած է Գալուստեան գերդաստանի թաղին մէջ, ի Մարմինա, մատուռին կից, արևելեան կողմը. իր գերեզմանին վրայ ևս զետեղուած է Մարմինայ համեստ շիրմ փառաւոր վերտառութեամբ, որ ժամանակի աւերիչ ընթացքին մէջ, մասամբ անընթեռնելի վիճակ մը ստացած է այսօր:

Կարապետ Գալուստի սիրելեաց յաջորդական մահերն խորտակեցին անոր սիրտն, բայց ան վայրէտան մը չը թուլցաւ իր պաշտօնին պարտականութեանց մէջ, իր դիրքն ևս քան զևս փայլեցաւ. Եղիազարեանց ծառայութեան հրաժարած և անոնց ընկեր եղած էր 1840ին (1256) Էլ-Մարթարիէի կառավարական աղահանքն շահագործելու համար. Այս միջոցներուն կ'ընթացէր Կարապետ աղա իր երկրորդ ամուսնութիւնն Պոլսեցի Օրիորդ Արուս Զարչամալարեանի հետ. այս երկրորդ ամուսնութիւնն առաջնոյն պէս ամուլ չ'մնաց. Կարապետ աղա երկր զաւակներ ունեցաւ Տիկին Արուսէ. բայց զժբազդարար երեքն ալ իրենց ծաղիկ հասակին մէջ թառամեցան մահուան խորշակէն. Կարապետ աղա Եղիպտական կառավարութեան վարձեց նաև Տամիլիթի ձկնարանը և ունեցաւ անոր հետ ուրիշ կարևոր գործեր. իր ազդեցութիւնն շատ մեծ էր վերին Եղիպտոսի մէջ, Մուհամմէտ Ալի և Իպրահիմ փաշաներու իշխանութեան օրով. իր ընտանեաց մէջ ցայսօր պատմուած զրոյցի մը նայելով՝ Կարապետ աղա արտօնութիւն ունէր իր շոգենաւակին (տահապիլի) մէջ թնդանթ կրելու, որ կարճակուէր երբ մտենար քաղաքի մը և տեղական կառավարութիւնը կը փութար իր մեծարանքի հաւատարմութեամբ չըջապատել փոխարքաներու սիրելի նաւորն. նոյն զրոյցին նայելով անգամ մը Կարապետ Գալուստ, փոխարքայ Իպրահիմ փաշայի հետ վերին Եղիպտոս կ'երթայ, կառավարական պահանջներու զանձումին համար և երբ պարտական դիւղացի-

ներն ամեն միջոցներու առջև անտարբեր կը մնան ու չեն ուղեր պարտքերին վճարել և ունեցածներն կը պահեն, անոնց մերկ մարմիններուն ձիւթ քսել և արևուն դէմ անուլթներուն տակէն կախել կոտոայ՝ վճարման արիպելու համար դիրենք. Իպրահիմ փաշա կը ստանէ այս բանը և դիտողութիւն կ'ընէ Կարապետ աղայի, որ կը պատասխանէ. «Բարձրագատիւ Տէր, եթէ այնպէս չ'ընենք, չենք կրնար մէկ դանկ զանձել», և Նորին Բարձրութիւնը ժպտելով կ'ըսէ՝ Եղիպտէ ինչ որ կուգես, միայն զգուշացիր մահ պատճառելէ»:

1847ի վերջերն Մուհամմէտ Ալի փաշայի թոռն Ապպաս պէյ Հիլմի, որդի վախճանեալ թօտուն փաշայի, հայածանաց ենթարկուելով կ'ստիպուի անապարանթ թողուլ Եղիպտական հողն և քովը պատրաստ դրամ չունենալով Ալիքսան աղա Եղիպտականներ կը դիմէ փոխառութեան համար. Ալիքսան աղա կը մերժէ. այն ատեն Ապպաս փաշա կը դիմէ Կարապետ աղա Գալուստի որ սիրալոյսով կ'ընդունի անոր առաջարկն և կը հայթայթէ ուղուածին չափ դրամ, Կարապետ աղայի այս փոխառութիւնն նշանաւոր արիւթեան և միանգամայն վեհանախարհեան գործ մը կը նկատուի իշխանազուն փոխառուէն, որ երբ քանիքամիս չը բոլարած, 1848ին, կը կոչուի վախճանեալ Իպրահիմ փաշայի յաջորդելու Եղիպտոսի փոխարքայական զահուն վրայ, կը յիշէ Կարապետ Գալուստի այն գործն և ոչ միայն կը վերադարձնէ առած գրամը այլ և հետզհետէ կուսայանոր ժամանակին առաջնակարգ ազաման պարկ ել և մտից պաշտօնատունէն, փողերանոցի տեսչութիւնը, զոր Կարապետ Գալուստ կը վարէր ամբողջ երեք տարի, իր իրաւասութեան տակ ունենալով այնպիսի օտարազգիներ, որոնց յաջորդներն այսօր Գահիրէի մէջ շատ նշանաւոր դիրքեր զբրաւած են. մէկ խօսքով Ապպաս փաշայի իշխանութեան բովանդակ շրջանին մէջ, 1848էն 1854 Կարապետ աղայի աստղն ամեն ժականակէ աւելի փայլած է, թէև անգամ մը քիչ մնաց

Նսեմանար այդ փայլն և ինք արտորուէր թիւրիմացութեան մը պատճառաւ...

Կան ազգակիցներ, և այնպիսիներու թիւը դժբաղդարար նուազ է՛, որ երբ բազմը ժպտի իրենց ու տէր ըլլան...

Քայց նկատելով որ Եղիպտոսէ և Արտասահմանէ հասած թղթակցութիւնը և հետզհետէ ձեռք բերուած փաստեր կը ծանրացան...

Յառաջիկայ թուով պիտի հրատարակուի Գրքի Յանձնաժողովոյ պաշտօնական տեղեկագիրը, նոյն ինքն Տ. Բիւրատի ինդրասնօց կարգաւորումը...

Այս առթիւ կը խորոշուի Արտասահմանի կողմից և Եղիպտոսի ամեն բաժանորդներէն որ նկատողութեան առնելով այս պաշտօնական յայտարարութիւնս...

Սոստաճածին Եկեղեցւոյ կառուցման ժամանակ՝ 2000 Ֆրանքի նիւթար նուիրատուութիւն մը և քանի մը տարի յետոյ նորոգութեանն առթիւ՝ իր անձնական քսակէն ոսկեղօծ խաչկախերու և աւագ խորանին սիւներուն շինութիւնը...

Պէտքիք տէրէի մէջ իմանաւորի ձեռքակալեցին Հնչակեան ընկերութեան պարագլուխներէն Ալիքան Արչեանը՝ որ Ամբիկայի անցադիրով Պոլսու մտած է, ինքզինքն բժիշկ ձեռքներով, ու քանի մը տեղեր Տօգդ. Գոխեր անուամբ ներկայացուած է, հարցաքննութեան միջոցին իւր Հնչակեան ըլլալը խոստովանած է, որուն վրայ զայն փակած են կեղծոնական բանտի դնգանը...

Ն. ԱՂԱԶԱՐՄ (Շարունակելի) Շահին անձին վրայ կատարուած սպանութեան փորձէն քանի մը օր յետոյ էր. սաստիկ հսկողութիւն կար իրան վեհապետին անձին վրայ, երկու Հայեր կը ներկայանան Ն. Վեհապետութեան պալատը, կը յայտնեն իրենց այցելութեան նպատակը, քանի մը վայրկեան յետոյ անոնք արգէն ծանուցուած էր:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Նոր Օրի նախկին խմբագիր Տ. Ս. Բիւրատի գաղարար պաշտօնական յայտարարութեամբ արգէն ծանուցուած էր:

Վարչութիւնս՝ ներողամիտ գտնուելու համար հանդէպ Տ. Ս. Բիւրատի, բաւական համարեց դարձնել իր պաշտօնը, ի պատիժ կար մը նիւթական և թէ բարոյական զեղծութեանը զոր անխղճաբար գործած է ինչպէս ընկերութեան մը կենսական շահերուն:

Քայց նկատելով որ Եղիպտոսէ և Արտասահմանէ հասած թղթակցութիւնը և հետզհետէ ձեռք բերուած փաստեր կը ծանրացան Տ. Բիւրատի զեղծութեանը ընթացքն աննկրելի կերպով, Վարչութիւնս հարկադրուած է, յօգուտ հանրային հաստատութեան, զիմել զատական իշխանութեան, որ իւր արդարութեամբ անօրինակ հարկ եղած օրինական տրամադրութիւններն Տ. Ս. Բիւրատի մասին:

Յառաջիկայ թուով պիտի հրատարակուի Գրքի Յանձնաժողովոյ պաշտօնական տեղեկագիրը, նոյն ինքն Տ. Բիւրատի ինդրասնօց կարգաւորումը և Լաւարան-Բիւրոստան Սեպտ. 23 նիստի շարունակութիւնը ուրիշ հանրութիւնը պիտի լուսարարուի քիչ շատ, Տ. Բիւրատի հանրային կեանքի վրայ:

Այս առթիւ կը խորոշուի Արտասահմանի կողմից և Եղիպտոսի ամեն բաժանորդներէն որ նկատողութեան առնելով այս պաշտօնական յայտարարութիւնս, ուզեն իրենց գրասն և կամ ու է գրութիւնը ուղղակի վարչութիւնը Նոր Օրի հասցէին:

ՀԱՅՈՑ ԶԵՐԲԱԿԱՎՈՒԹԻՒՆԻՆԵՐԸ

Կ. Պոլսէն երէկ հասած թղթակցութիւններէն կը տեղեկանանք թէ Սասնոյ մէջ վերջերս կրկնուած Լարդերը այն ատիճան զբաղած են Հայ յեղափոխականներու մտքերը, որոնք պատրաստած են արկղայից ցոյց մը Սուլթանի կողմնակցութեան դէմ, որուն պիտի մասնակցին նաև Ժեօն-Քիւրթեան. Սուլթանը մտաւանդութեան մէջ է, և կը վախճուի որ ծանր խառնակութիւններ չը ծագին:

Թուրք սոստիկանութիւնը խիստ ըզգուշութիւններ ձեռք առած է, հարիւրաւոր Հայեր ձեռքակալուած են, քանի մ'օրուան մէջ:

Պէտքիք տէրէի մէջ իմանաւորի ձեռքակալեցին Հնչակեան ընկերութեան պարագլուխներէն Ալիքան Արչեանը՝ որ Ամբիկայի անցադիրով Պոլսու մտած է, ինքզինքն բժիշկ ձեռքներով, ու քանի մը տեղեր Տօգդ. Գոխեր անուամբ ներկայացուած է, հարցաքննութեան միջոցին իւր Հնչակեան ըլլալը խոստովանած է, որուն վրայ զայն փակած են կեղծոնական բանտի դնգանը:

Նմանապէս Գոչիան անուն երիտասարդը, թէպէտև զեռ անբախտուած չէ, բայց կը փնտրուի:

Օգոստոս 31-ին վեհ. խորհրդան կաթողիկոս Թիֆլիս ժամանեց. Թիֆլիսի Առաջնորդը, սոստիկանապետը, աւագանին կայարանը զիմաւորելու գընացին Ն. Վեհապետութեան, որ քառասնի կառքով ուղևորեց զէպ ի Առաջնորդարան:

Եղիպտոսի Ազգային Առաջնորդարանը հասած պաշտօնական նամակ մը կը ծանուցանէ թէ՛ Գեր. Այվազեան Եպիսկոպոս, նորընտիր Առաջնորդ Եղիպտոսի, յառաջիկայ շաբաթ Պոլսէն պիտի մեկնի, զէպ ի Աղեքսանդրիա:

ՓԱՐԻՉԻ ՄԵՐ ԹՂԹԱԿՅԷՆ

Շահին անձին վրայ կատարուած սպանութեան փորձէն քանի մը օր յետոյ էր. սաստիկ հսկողութիւն կար իրան վեհապետին անձին վրայ, երկու Հայեր կը ներկայանան Ն. Վեհապետութեան պալատը, կը յայտնեն իրենց այցելութեան նպատակը, քանի մը վայրկեան յետոյ անոնք արգէն ծանուցուած էր:

նի մը վայրկեան յետոյ անոնք արգէն թաղարարայ թաղարարին առջև կը գտնուէին: Այդ երկու Հայերն էին Պ. Պ. Գեորգ Բաշինջաղեան և Չերապ: Երկու ծառայներ Շահին կը ներկայացնեն, զեղեցիկ իւզաներկ մը զոր պատրաստած էր, ներկայ Հայ նկարիչը: Շահը հիացմամբ կը նայի ներկարին վրայ և կը բացազանչէ Արուսէն Ե Այս. Այս, Արարատի մէկ զեղեցիկ նկարն էր զոր Պ. Բաշինջաղեան ուզեր էր Շահնշահին նուիրել յերախառագիտութիւն այն հայկական խնամքին որ Նորին վեհապետութիւնը կը տած էր զէպի առ հասարակ իւր բոլոր քրիստոնեայ հպատակները և մասնաւորապէս Հայերը: Շահը բարեհաճեց է ըսել թէ ինք միշտ պաշտպաններ է Հայերը և միշտ ալ այն կերպով պիտի ընթանայ:

Շահը մի քանի անգամներ գոհունակութեան բացականչութիւններ կը նէ նկարին նայելով, շատ կը գովէ յարգելի նկարիչը և կը հրամայէ մասնաւոր խնամքով այդ զեղեցիկ նկարը թէհրան իւր պալատը վերկել, ուր ուրոյն տեղ մը պիտի յատկացուի Արարուսին:

Պարսից Շահը Պոլսու հասած է, երկու մահմետական կայսրներ զիրար ընդդրեցած են սիրալիբ համբոյններով: Շահը զեռ Պոլսու չը հասած որոշուած էր որ Սուլթանը մինչև Տոլմա-Պահլէի պալատը պիտի դիմաւոր էր իւր վեհապետ հիւրը, տառաջնորդելու համար զայն Երբայրի պալատը:

ՅԱՅԳԵՐԳ ՄԸ

(Նուէր Պ. Մ. Ի)

Լուսնակն աչքէ անհետացաւ, Ու ժամն հնչեց արդ կէս-գիշեր, Դուն ալ, ո՛վ կոյս, ա՛յ չ'ես երգեր Սիրոյ երգերդ արտայայտող ցաւ:

Մթնոց սրահդ իմ սրտիս պէս, Նընջարանիդ ճրագին է վառ. Հայելոյ դէմ՝ անիտեմ յար, Պանունսքդ հոն բաց կը թողես:

Մեկով մ'անշուշտ սողորած դուն, Խեղախորոյս չ'ես զգուշեր, Երազներու ներքէ արբշիտ՝ Չ'ես գիտեր որ ես կամ արթուն:

Գեղեցիկ ես, համակ հրապոյր... Դիւր Գլխիկդ բարձիւ ուրախ. Անուրջիկ մէջ սերդ կուգայ վազ՝ Ծրծիկ շնչիկդ անուշաբոյր:

Այգուն երբոր թոթափես նիբհ, Սիւզին հանդէպ շնչոյ բեկ բեկ՝ Մերամաղձիկ ճակատիկ երբէք թօղ մի՛ տար որ տխրի նանիբ:

Վշտերգերուց այն քու փոխան, Երգէ՛ ինքեզդ գաշնակիկ հետ, կամ առ եզեմ մը ծաղկաւտ Պարսիկից մէջ՝ խայտ, եկ' որ ման:

Ան, որուն սիրտ տուած ես զուն գազա, Մեկ ակնարկովդ բու հոգասար, Գերիկ կ'ըլլայ կամակատար՝ Գերիկերուց մէջ, բարեբա՛ղդ...:

Հոս կը նայիս... Ո՛հ, տեսար իս, Վարագոյններդ ինչոյցի ցած, Ծիծուցիբ լոյսդ իրար անցած, Ծիծուց լոյսն իր և իմ հոգին:

Գահիրէ ԲԻՌՈՒՍՈՆ Գեորգ կարծեր որ հնչակեանները ԺԵՏՈՍ Թիւրքերու յայտնած ըլլամ իրենց գործունէութեամբ գաղտնիքն:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Բ. Խըրիվը և Ղազի Ահմէտ Մուրիթար փաշայ որ այժմ Աղեքսանդրիա կը գտնուին, յառաջիկայ շաբաթ պիտի թողուն վերջնականապէս Աղեքսանդրիա Գահիրէ գալու համար:

—Յունաց նորընտիր Պատրիարք Ֆոթէոս, երեկ հասաւ Աղեքսանդրիա: —Համալսարանային Յուցահանդէսի առթիւ Ֆրանսայի քաղաքապետ ներու հացկերոյթը արուեստ Սեպտ. 22-ին որուն սեղանակից կղան 22 հազար հոգիներ, նոյն հացկերոյթին ըսպառեցաւ 66 հազար հաց, 40 հազար շիշ գինի կայն կայն:

«ՇԱՐԿԻՅԷԻ ԱՐԿԱՆԸ»

Շար. Յախորդ թիւէն և վերջ)

Նոյն օրը աչքիս առչե թաղուեցան դիակներ, որոց մէջ կը գտնուէր նաև Ահմէտ պէյ Ասրի մարմինը. ժամերու յուզումն այնքան ընկճած էր զիս որ ամեն ինչ այլ ևս երազ մ'էր ինձ համար: Երբ վայրկեան մը լեբան գազաթը դէպ ի լապտերին մօտը գտնուեցայ, շուրջս տեսայ Մուհամմէտ-էլ-Մաղրապին որ ինձ կ'ըսէր պարծենալով. «Գու կեանքդ ինձ կը պարտիս, եթէ ես չ'ըլլայի մեռած էիր»: Այս խօսքին վրայ, միտքս և կա թէ արգարե այդ մարդիկները կողոպտած պիտի ըլլային իմ գրպանէս 63 ոսկոյ դումար մը զոր թաշկինակիս մէջ պահած էի: Սթափեցայ ու նաւապետին գանգատեցայ, բայց անօգուտ. նաւապետը սնդեց իմ քովս երբէք դրամ չը գտնուին: Հարցուցի թէ Ահմէտ պէյ Ասրի քովս ալ դրամ կամ ոնէ ինչ չէ՞ր գտնուած. ոչինչ պատասխանեցին. մինչդեռ լաւ դիտեմ որ Ահմէտ պէյ կը կրէր ժամացոյց մը ոսկի շղթայով միանգամայն յիսուն անգլիական ոսկոյ դումար մը. ինչ կղան բոլոր այդ առարկաները. նաւապետը պատասխանեց թէ՛ Ահմէտ պէյի գիտեղ իւր ներկայութեան ծովէն հանուած էր և այդ միջոցին վրայէն ոնէ բան գտնուած չէր. դեռ նմանօրինակ տեղեկութիւններ շատ ունիմ, զոր ի հարկին հարցաքննութեան միջոցին պիտի յայտարարեմ: Վերջապէս Յունական պատերազմական նաւ մը եկաւ զմեզ փոխադրելու ֆիլիք. երբ մտայ նաւուն մէջ, կտի դարձայ ու դիտեցի տխուր՝ Եւրոպիէի կայսերուն երկու ծայրերն որոնք ծովու երեսէն երկու մեթրի շափ վեր բարձրացած կը տեսնուէին:

—Շարգիյէի նաւապետը Սոփրայէ և նաւաստիներէն եօթը հոգիներ Բոնէս Ապպաս շոգենաւով երէկ Աղեքսանդրիա հասան. հիւպատոսարաններու կողմէ պատուիրակներ դնացին և խուզարկեցին ազատուողներու գրպաններն:

Հարցաքննութիւն պիտի բացուի հաստատելու համար թէ ճշմարիտ է թէ ոչ իրենց վրայ եղած ամբաստանութիւնը, զոր յիշեալ Մէհմէտ Ֆէհմի և Յունական թերթերն շատ ծանր կը նկարագրեն:

Հարցաքննութիւն պիտի բացուի հաստատելու համար թէ ճշմարիտ է թէ ոչ իրենց վրայ եղած ամբաստանութիւնը, զոր յիշեալ Մէհմէտ Ֆէհմի և Յունական թերթերն շատ ծանր կը նկարագրեն:

Հարցաքննութիւն պիտի բացուի հաստատելու համար թէ ճշմարիտ է թէ ոչ իրենց վրայ եղած ամբաստանութիւնը, զոր յիշեալ Մէհմէտ Ֆէհմի և Յունական թերթերն շատ ծանր կը նկարագրեն:

Հարցաքննութիւն պիտի բացուի հաստատելու համար թէ ճշմարիտ է թէ ոչ իրենց վրայ եղած ամբաստանութիւնը, զոր յիշեալ Մէհմէտ Ֆէհմի և Յունական թերթերն շատ ծանր կը նկարագրեն:

Հարցաքննութիւն պիտի բացուի հաստատելու համար թէ ճշմարիտ է թէ ոչ իրենց վրայ եղած ամբաստանութիւնը, զոր յիշեալ Մէհմէտ Ֆէհմի և Յունական թերթերն շատ ծանր կը նկարագրեն:

ԳՈՅԱՐՆԵՐ

* * * Օր մը որ կ'անցնի առանց ազգիս ծառայելու, կեանքես արտաքսուած օր մըն է: ՏԸՁԷ

* * * Ձը կայ խաղաղութիւն՝ շարա սըր յի մարտերու հետ, եթէ պահ մը խնամարհ երեւիս՝ կը կարծեն թէ առ անի այդպէս կը շարժուի: ՎՈՒԴԵՌ

* * * Մարդու համար կարեւորագոյն զի տուութիւնն է ճանաչել իւր անձը: ՊՍՄԻԷ

* * * Իմ փառքս չուզեր ներհոյ թշնամիի մը արիւնք: ՊԱՅՐՆ

* * * Վրէժխնդրութիւնը տեսակ մը վայրենի արդարութիւն է: ՊՍՄԻԷ

— Երբ մարդս վրէժ կը բռնէ, իր թըշնամիին հետ ձեռքակից կ'ըլլայ, բայց երբ անոր վրայէն կ'անցնի, գերագանց կը կանգնի, որովհետեւ իշխանական վեհանձնութիւն է ներքը:

— Յաճ է խորամանկ վատերը խաւարին մէջ թշուղ նետերու կը նմանին: ՊԱԳՕՆ

* * * Պայքարը յաջողութեան պայմանն է. մեր թշնամին մեր օգնականն է: ՌՈՊԷՍ ԲԻԷՐ

* * * Տեղի տալ՝ կամ տեղը տալ: ԿԱՄՊԵԹԹԱ

* * * Մարդկային գործերու մեծութիւնը՝ անոնց ծնունդ տուող ներշնչումէն կը չափուի: — Յիմարները միշտ ամեն բանի պատասխան կը գտնեն. անոնց հետ խօսած ատեն երբէք վերջին խօսքը բռնող չ'ըլլար: — Ոչինչ աւելի վատագուս է բնկերութեան մէջ, քան առանց նկարագրի մարդ մը: ԿԷՕԹԷ

* * * Գէշ գիտաբանութիւն ունեցողը չի կրնար առանց ստուքեան բան ընել: Ե. ՄՕՆԹԷՎԷՐԻԷՆ

Հաւաքեց Ս. ՉԱՐԵՀԵԱՆ

Le Gérant J. MUNIER

Գ.Ա.ՅԷ ԵՓՐԱՏ

Ապսին Պապ-Էլ-Պոսթանգ Լապարակին վրայ եւ Նուագածուաց խմբի Ձօրանոցի դիմացը
ՕՀՆՆԵՍ ՄԻՄՈՆԵԱՆ
ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ՀՆԿ:

Մէկ հատիկ Ձօրանոցն է Գահիրէի մէջ, ուր կենցաղաւոր մը կարենայ անցընել հաճոյալի ժամանց մը: Ապսինի ընդարձակ հրապարակին զովտղին օղբ, վայրին արանքի դիպրը, և սպառներուն մաքրութիւնը, ըմպելեաց անարատութիւնը. այս ամեն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ՁԲՕՍԱՐԱՆԸ քեզ ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկուն, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վայելեն երջանիկ ընկերութիւն մը:

Ամեն կարգի զովտար, թարմ ու անխառն ըմպելիներէ զտու մասնաւոր խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միջոցներէ օչարակ. ամենէն զրծուարահաճներն անգամ պիտի գոհ մնան Եփրատէն:

ՃԱՅԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶԱՆՃԵԱՆ
Շուրա Ապու-Սապահ
Նիիու-ՏԵԽԻԼԵՐԱԷԼ ԿԵՆՏՐՈՆԻՆ ԳԻՄԱՍԵՐ:

Փղատուն ու զուարճալի դիրք. մաքուր ու փայլուն սպաս. համեղ ու մեղմարար կերակուրներու զանազանութիւնն, անխորաքալի պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով. ահա՛ Գահանձեան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վտահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

ՊԱՆԳ ԼԻՕՆԷՁ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՐԻՄԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ
Մ. ՍՍՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժողով գրամատուներ, այս անգամ ունեցաւ իւր Էդիպոսի գործակալն ալ, Տ. ՄԿԻՐԱԿ ԾՅՈՅԵԱՆ, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութենէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և ֆոնէտի ջօնսիլէի, վիլ տը Բարիի գործողութիւններ, գանձումներ: Սմական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեկիցի մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափարդները հաճին դիմել Նիպաւի վրայ փաստարան Ռարթարիի գրասենեակը:

ՊԵԼԱԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐՉԱԿԵՐ
ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿԱՆՑ
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ

Ապսինի մեծ պողոտային վրայ Տայրայի Սանիյի դիմացը, նախկին Էլիսաբեթի գործիներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարար:

րենը արդոյ հասարակութեան թէ պատրաստ ենք գոհացնել մեզ դիմող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտահաշութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագիրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին:

ԱՏԱՆԱԲՈՅԺ
Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գտնուիմը:

Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8 և 9:

ՉՈՒԼԻՉ-ՄԵԳԵՆԱԳՈՐԾ
ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԲ
ՍԱՐԳԻՍԵԱՆ
Ս. ԿԱՐԻՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

—X—
Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արջիլէ զանազան գործիներ սակերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծրարկ, ելն, յաճախորդները գոհացնող պայմաններով:

Ի ԳԱՀԻՐԷ
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ԺԻՇԴ ԴԻՄԱՑ
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու երոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետմաներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազուխներ, պահարաններ, հաշուեցուցակներ ելն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, արեւնայն խնամով եւ ճշգրտաւ սպազմութեամբ:

ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ